թիւն կենաց չնորհէ նմա. ամէն։ — եւ որք հանդիպիք այսմ տառի թողութիւն մեղաց և յարութիւն կենաց խնդրեցէք ինձ վշտացնելոյս եւ ծնաւղաց իմոց հաւրն իմոյ Թումա քահանայի եւ Մայրական իմոյ և Ա.Ծ. զձերն թողու ամէն. մի ոք իշխեսցէ հանել զսբ. կտակս ի սբ. Փրկչիս և որ յանդգնի և հանէ մասն և բաժին զկայենին եւ զՅուդային առցէ. բայց թէ ահ լինի կամ փախուստ, պահեն եւ այլ ի յերուսաղէմ դարձուսցեն, ի յիւր տեղիքն խնամով պահողքն աւրհնին յԱյ. և անխնամքն զպատիժն կրեսցեն։ Տր Ցս արդար... (Թերի)...»։ Այս ձեռագիրը, որ կը բովանդակէ չորս աւետարանները եւ հատուածներ Հին Կտակարանէն, Կարապետ վրդ. ինքնագիր յիշատակարանով մը կը նուիրէ Ս. Փրկչի վանքին. «ես նուաստս Կարապետ վրդ.ս տուի զիմ գրկունքս որ է նոր կտակարանին, առակին եւ յեսայիին սբ. փրկչին որ է տեղիք չարչարանաց Քրիստոսի այ յուսոյն մերոյ եւ կայ սեղան ածաւերձ վեմն՝ որ զՅս ի վերայ ձաղեցին, յիշատակ ինձ եւ իմոցն հաւրն իմոյ Թումայ քիյին եւ մայրական իմոյ հանգուցեալոյն առ Քս. ըստ յեսայեայ թէ երանի որ ունի զաւակ ի Սիոն եւ ընտանեակ յերուսաղէմ. խնամով պահողքն աւրհնին յայ։»

Յովհաննէս Պե. 1853ին այս ձեռագիրը Երուսաղէմի քաղաքացիներէն ծախու առնելով յիշատակ կուտայ Ս. Յակոբի վանքին։ Ձեռագրին բովանդակութեան, բուն գրչի յիշատակարանի և այլ պարագաներու մասին տեսնել վերոյիշեալ ձեռագիրը, նաև (Սաւաղան, էջ 615-617, Մուրաս, էջ ՅԺԹ-ՅԼԵ)(*)։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՓՈՐԵԱՉ, ՊՈԼՍԵՑԻ.—Մբ. Կր. պտրք. Շղթայակրի օրով. յիշատակներ ունի Ս. Յակոբի վանքին մէջ. (ՄՁ. Թ. 532)։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՔԱՋԲԵՐՈՒՆԵԱՑ. — Արծուաբեր վանքին

(*) Երկու համանուն վարդապետներու (Կարապետ Երուսաղէմացի և Կարապետ Տոսպեցի) կողմէ Ս. Փրկչի գնման կամ նորոգութեան մասին աւանդուած յիշատակարանները՝ իրարմէ անկախ գործունէութեան վաւերագիրներ են ըստ ինքեան։ Տարակոյս չիկայ որ Երուսաղէմացիին չինութիւնները ոչ քրիստոնեայ բնակչութեան մը ձեռքով քանդուած էին, և գրաւուած էր վանքն ալ, երբ՝ Տոսպեցին, աւելի քան դար մը վերջը, նոյնը կը գտնէ դարձեալ, ու ժամանակին պահանջումին համաձայն՝ իր դիմումները կը կատարէ տիրող իշխանութեան մօտ (յեգիպտոս), նորոգութեան արտօնութիւն ձեռք բերելու համար։